

**ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ «ԵՍ»-Ի ԱՐՏԱՑՈՂՈՒՄԸ ՎԱՇԻՆԳՏՈՆ
ԻՐՎԻՆԳԻ ՓՈՔՐ ԱՐՁԱԿՈՒՄ**

Սույն հոդվածում ուսուսուսաիրվում է ամերիկյան ռոմանտիզմի հիմնադիր Վաշինգտոն Իրվինգի հեղինակային «ես»-ը նրա գրական երկերում, ներկայացվում է, թե ինչպես են գրողի անհատական հատկանիշներն ու ստեղծագործությունները միմյանց փոխլրացնում՝ զուգահեռելով և բացահայտելով դրանցում առկա անմիջական աղերսը: Իրվինգի ստեղծագործությունների, մասնավորապես փոքր արձակի կառուցվածքային ու բովանդակային առանձնահատկությունները ուսումնասիրելուն զուգահեռ՝ դիտարկվում է գրողի անհատականությունը, քանի որ այն իր մեծ ազդեցությունն է թողել նրա արձակի վրա: Գրողի զուսպ, հավասարակշիռ և ներհուն տեսակը հստակ արտացոլվում է հատկապես նրա պատմվածքներում և նովելներում: Չկան ծայրահեղություններ թե՛ նրա կյանքում և թե՛ ստեղծագործություններում: Իրվինգի պատումներն առանձնանում են հանդարտությամբ, թեթևությամբ, նրբանկատությամբ, ներդաշնակությամբ, հումորով և միաժամանակ խոր իմաստով: Հեղինակի փոքր արձակում գերիշխում են նկարագրական հատվածներ, որոնք լրացվում են ամենատարբեր մանրամասներով և պատկերազարդ տեսարաններով: Մակայն այստեղ գրեթե միշտ զգացվում է գործողությունների պակաս: Գրողը, լինելով ինքնամփոփ, խուսափել է նաև երկար ու ձանձրալի տեքստեր գրելուց՝ փոխարենը գերադասելով հակիրճ, բայց միաժամանակ իմաստալից, սահուն ու գեղեցիկ խոսքը: Վերջնահաշվում ստեղծվում է այնպիսի տպավորություն, որ ամեն բան իրական է, և ընթերցողն այդ տեսարանների ու պատկերների անմիջական ականատեսն է:

Բանալի բառեր. գրական ոճ, պատմվածք, ռոմանտիզմ, գրական ճանաչում, աշխարհընկալում, կեղծանուն, պատկերազարդ տեսարաններ

* amiryananna@ysu.am ORCID: 0009-0009-2837-5166



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Received: 26/03/2024
Revised: 30/04/2024
Accepted: 30/05/2024

© The Author(s) 2024

Ներածություն

Ռոմանտիզմն աշխարհի առաջավոր գրականությունների շարքում ունի առանցքային դեր: Դրա հիմքում ընդվզում է ոչ իդեալական իրականության դեմ: Ռոմանտիկ ստեղծագործություններում հատուկ ուշադրություն է դարձվում մարդու ներաշխարհին, և իրական կյանքն արտացոլվում է՝ վերափոխված, հեղինակին ցանկալի և խիստ սուբյեկտիվ մոտեցումներով: Ռոմանտիկ գրողները մշտապես գրում են իրական աշխարհի անկատար լինելու մասին և դրան հակադրում իրենց երևակայական աշխարհը: Արվեստագետի ստեղծագործական ազատությունն ու ժողովրդական բանահյուսության հանդեպ մեծ հետաքրքրությունը նույնպես բնորոշ են ռոմանտիկ ստեղծագործողներին: Ռոմանտիզմը կարևոր նշանակություն է ունեցել ոչ միայն եվրոպական, այլ նաև ամերիկյան գրականության զարգացման մեջ: 19-րդ դարում Եվրոպան արդեն իսկ ամրապնդել էր մի ողջ հազարամյակում ձևավորված գրական որակ: ԱՄՆ-ն այս առումով դեռ կողմնորոշված չէր: Սա հենց այն շրջանն էր, երբ անկախության համար մղվող պատերազմում (1775-1783) հաղթանակում են գաղութաբնակները, և արդյունքում ձևավորվում է Ամերիկայի Միացյալ Նահանգները: Կազմավորված բուրժուա-դեմոկրատական կարգերն իրենց հետ առաջացնում են լուրջ հակասություններ ու բախումներ երկրի ներքում: Պատճառն այն էր, որ թեև հետհեղափոխական ԱՄՆ-ն տնտեսական մեծ վերելք էր ապրում, այնուամենայնիվ ակնառու էր նաև հոգևոր և մշակութային հետընթաց: Տեխնիկական և արդյունաբերական զարգացումներն ամերիկաբնակների շրջանում առաջացնում են շփոթմունք ու մեծ դժգոհություններ, որոնք Ամերիկայում հիմք են նախապատրաստում ռոմանտիկ հայացքների ձևավորման համար:

Ամերիկյան ռոմանտիզմի զարգացումն անցել է երկու հիմնական շրջան՝ վաղ (1820-1830-ականներ) և ուշ շրջան (1840-1865-ականներ): Մինչ ռոմանտիզմի մուտքն ԱՄՆ ամերիկյան գրականությունը ոչ մի ազդեցություն չէր թողնում համաշխարհային գրականության վրա: Այն ամփոփվում էր լոկ ԱՄՆ-ի սահմաններում:

Միայն ամերիկյան ռոմանտիզմի վաղ շրջանի ներկայացուցիչներ Վաշինգտոն Իրվինգի, Ուոլտ Ուիթմենի, Ջեյմս Ֆենիմոր Կուպերի, Էդգար Պոյի շնորհիվ ամերիկյան գրականությունը մեծ վերելք ապրեց և արժանացավ համաշխարհային ճանաչման:

Վաշինգտոն Իրվինգը (1783-1859) ամերիկյան ռոմանտիզմի վաղ շրջանի հիմնադիրն է և համարվում է ամերիկյան գրականության *Հայր*: Իրվինգի գրական ժառանգության զգալի մաս էն կազմում պատմվածքներն ու նովելները: Նրա դերն ամերիկյան գրականության պատմության մեջ առանցքային է: Իրվինգի շնորհիվ Ամերիկայում սկիզբ է առնում նովելի ժանրը՝ կատարելով նույնչափ կարևոր դեր, որքան վեպը: Թեև նա չափազանց կարևոր ազդեցություն է ունեցել ամերիկյան գրականության

ձևավորման մեջ, սակայն նրա անհատականությունը՝ որպես ինքնատիպ գրական ոճի ձևավորողի բավականաչափ չի ուսուժաստիճանով գրականագիտության մեջ:

Առհասարակ, յուրաքանչյուր գրողի գրական ոճի ձևավորում մշտապես պայմանավորված է լինում մի շարք գործոններով, այն է՝ տվյալ գրողի անհատականությամբ ու խառնվածքով, աշխարհընկալմամբ, ապրած ժամանակահատվածով, այն երկրին կամ տարածաշրջանին հատուկ պատմամշակութային առանձնահատկություններով, որտեղ նա ապրում է: Այն նաև պայմանավորված է լինում ռասայական առանձնահատկություններով: Եվ այս առումով կարելի է ասել, որ գրեթե միշտ հեղինակի գրական ոճի ձևավորման հիմքում նրա անհատականությունն է:

Այսպիսով՝ գրականագետների և գրողների զգալի մասը վստահաբար պնդում է, որ ցանկացած հեղինակի ոճը հենց իր իսկ անհատականության արտացոլանքն է:

Ամերիկյան գրականության պատմության հեղինակներից շատերն են անդրադարձել Վաշինգտոն Իրվինգի ստեղծագործություններին: Եվ գրեթե բոլորն են եղել համակարծիք, որ Իրվինգն ունեցել է իր ուրույն ոճը: Սակայն նրա հեղինակային «ես»-ը բավարար քննության չի ենթարկվել: Նա եղել է ամերիկացի առաջին գրողը, որի ստեղծագործություններն ընդունվել և ճանաչվել են Եվրոպայում: Ուստի անհրաժեշտ է հասկանալ, թե Վաշինգտոն Իրվինգն անհատապես և բնույթով ինչպիսին էր, և որքանով է իր գործերում արտացոլվում նրա անհատականությունը:

Տվյալ աշխատանքի նպատակն է ուսուժաստիճանով ամերիկյան ռոմանտիզմի վաղ շրջանի հիմնադիր Վաշինգտոն Իրվինգի փոքր արձակը, ինչպես նաև հնարավորինս անկողմնակալ վեր հանել նրա գրական ոճի որոշ առանձնահատկություններ և պարզել, թե որքանով են դրանք արտացոլում հեղինակի «ես»-ը: Աշխատանքն արդիական է այն առումով, որ այստեղ ուսուժաստիճանով են գրողի անհատական հատկանիշներն ու ընդհանուր գրական ոճը ոչ թե մեկը մյուսից առանձին, այլ միմյանց փոխընդհանրելով, միմյանց միջև զուգահեռներ անցկացնելով և բացահայտելով դրանցում եղած անմիջական կապը:

Վաշինգտոն Իրվինգն ու նրան ձևավորող միջավայրը

Եվրոպացիները, առաջին անգամ ընթերցելով Վաշինգտոն Իրվինգի երկերը և հետագայում պարզելով, որ նա իրականում ամերիկացի է, շատ են զարմանում: «Բոլորն ապշած էին, որ ամերիկացին լիովին տիրապետում է անգլերենին: Ինձ վրա նայում էին, ինչպես մի նոր ու տարօրինակ երևույթի գրականության մեջ: Ասես մի կիսավայրենի էի, որը փետուրը ձեռքն էր վերցրել գլխին դնելու փոխարեն» (Irving, 1982, էջ 7),- այսպես է գրում Իրվինգը: Նա նաև առաջինն էր Ամերիկայում, որն իր ամբողջ ժամանակը տրամադրեց զուտ գրական գործունեությանը. գրելն Իրվինգի

համար դարձավ նաև ապրուստ հայթայթելու միակ միջոցը: Իրվինգը ստեղծել է իր ուրույն գրական ոճը, ունեցել է հենց իրեն հատուկ ձեռագիր: Եվ դա, իհարկե, պայմանավորված է եղել մի շարք գործոններով:

«Հայտնի է, որ չկան իրար բացարձակ նման երկու դիմագծեր միլիոնավոր դեմքերի մեջ. յուրաքանչյուրն ունի իր սեփական դիմագիծը, նույնկերպ ցանկացած մարդկային միտք տարբեր է մեկ ուրիշի մտքից» (Earle, 1890, էջ 347):

Հնարավորինս բացահայտելով Վաշինգտոն Իրվինգի «ես»-ը՝ պարզ է դառնում, թե ինչպես է կազմավորվել և ձևավորվել նրա գրական ոճը:

Վաշինգտոն Իրվինգն այն գրողներից է, որի անհատականության ձևավորման վրա մեծ ազդեցություն են թողել այն միջավայրը, պատմական իրադարձությունները, ընտանիքում և երկրում տիրող բարքերը, որոնցում նա անցկացրել է իր մանկությունն ու պատանեկությունը: Եվ հետաքրքրական է, որ գրողի անհատականությունը հասկանալու համար անհրաժեշտ է դիտարկել իր կյանքում և շուրջը տեղի ունեցած գլխավոր իրադարձությունները:

Վաշինգտոն Իրվինգի ծնողները շոտլանդա-անգլիացիներ են եղել: «Իրվինգն իր հորից է ժառանգել պրպտող խառնվածքը, կապվածությունը ռոմանտիզմին, սերը գեղեցիկի հանդեպ և արագորեն փոփոխվող տրամադրությունը» (Irving, 1857a, էջ 3): Տրամադրության մշտական փոփոխություններն անկասկած ազդում են նրա ստեղծագործական կյանքի վրա այն առումով, որ նա գրում էր միայն այն ժամանակ, երբ տրամադրված էր լինում: Այստեղից էլ պարզ է դառնում նրա ստեղծագործություններում առկա միատեսակ հանգստության, նաև երկերի զարմանալիորեն փոքր ծավալի պատճառը:

Իրվինգի հայրը եղել գերիշխող և, հավանաբար, մեծ ազդեցություն է ունեցել նրա վրա՝ հաճախ շատ հարցերում սահմանափակելով հարուստ երևակայություն ունեցող տղային: Ստենլի Ուիլյամսն այս առիթով գրել է. «Իհարկե, նրա կրտսեր որդին չէր մոռանում նրան, իրոք նայում էր նրան վախեցած, իսկ երբեմն էլ այնպիսի զզվանքով, ինչպիսին կարող էր զգալ մարդկային հոգին օտարի հանդեպ» (Williams, 1935a, էջ 5):

Սակայն մոր հետ Իրվինգի կապվածությունն ու նրա հանդեպ սերն ու ջերմությունն անչափ ամուր էր: Անգամ մոր մահից երկար ժամանակ անց Իրվինգը չի կարողանում հաշտվել այդ մտքի հետ և գրում է. «Մինչ օրս ես երագում տեսնում եմ նրան և արթնանում եմ՝ արցունքներն աչքերիս» (Williams, 1935a, էջ 5): Մոր ազդեցությունը ապագա գրողի ներաշխարհի վրա ակնհայտ է. մոր մահվանից կարճ ժամանակ անց Իրվինգը գրում է մոր և որդու հարաբերությունների մասին: Ստեղծագործությունը կոչվում է «Այրին և իր որդին», որն իր հերթին զետեղված էր «Էսքիզների գիրք» ժողովածուի մեջ: Եվ, առհասարակ, Իրվինգի ընտանիքի բոլոր անդամները, բացառությամբ հոր, ջերմորեն և եզակի նվիրվածությամբ էին կապված միմյանց: Իրվինգի կյանքն առնվազն մինչ

նրա երեսուներկու տարեկանը և ապա դրանից հետո կարելի է բնութագրել իր եղբայրների և քույրերի միջև ամենաջերմ փոխհարաբերություններով լի:

Հավանաբար, Իրվինգի անհատականության ձևավորման վրա նրա անգլիական ծագում ունենալուց գատ նույնքան կարևոր է եղել այն փաստը, որ նա ծնվել է Նյու Յորքում: Այս ազդեցությունն ակնհայտ երևում է հետևյալ մեկնաբանության մեջ.

«Իրվինգին առնչվող առաջին դիտարկումը վերաբերում է այն փաստին, որ նա ծնվել էր Նյու Յորքում, բայց ուներ բրիտանական ծագում: Այսպիսով՝ Նոր Անգլիան ոչ մի կերպ չէր դիպել նրան: Պուրիտանական դարաշրջանը եղել է ներդաշնակ, իսկ 19-րդ դարի վաղ շրջանում Նոր Անգլիան դեռ հիմնականում պուրիտանական էր: 18-րդ դարում Էդիսոնը, Ֆիլդինգը և Գոլդսմիթը շրջահայաց էին, իսկ Իրվինգի մանուկ հասակում Նյու Յորքը այդ ժամանակաշրջանի երկարաձգումն էր. բառացիորեն կոսմոպոլիտ, այն նույնիսկ այդ ժամանակ կլանված էր ամենակուլ ներկայով: Ռոմանտիզմի դարաշրջանը, որը պիտի գերիշխեր նոր դարի սկզբում, պետք է լիներ հետահայաց, որտեղ գրողն անհետացած անցյալից կստեղծեր իր երազանքների իդեալական աշխարհը: Այդ ամբողջ ներդաշնակության և Նոր Անգլիայի պուրիտանիստական ժամանակաշրջանից Իրվինգի գործերում հետք անգամ չէր նկատվում» (Pattee, 1923, էջ 1-2):

Իրվինգի ծնունդը Նյու Յորքում իր վրա մեկ ուրիշ ազդեցություն էլ ուներ: «Ի տարբերություն այդ ժամանակվա Բոստոնի Նյու Յորքը չուներ ոչ մի ինտելեկտուալ մթնոլորտ, ոչ մի սովորույթ, ոչ մի դասակարգում հասարակության մեջ, և արդյունքում Իրվինգն իր ընթերցելու բնական ցանկությունը հագեցնում էր հոր գրադարանում եղած գրքերով» (Pattee, 1923, էջ 2): Նա կարդում էր Էդիսոնին և Ջոնստոնին չիմանալով գրական նոր միտումների մասին, և, այսպիսով, սկսում է գրել Էդիսոնի ոճին հնարավորինս նման: Այս կերպ Իրվինգն ըստ էության երկարաձգում էր 18-րդ դարի գրական ավանդները: Եվ, անկասկած, կլասիցիզմի հիմքն անչափ անհրաժեշտ դեր ուներ երիտասարդ գրողի ձևավորման մեջ: Այն հեղինակի գրական ոճին հաղորդեց կայունություն և զսպվածություն, յուրահատուկ գեղեցկություն և կատարյալ թափանցիկություն: Այն դարձրեց գրողին մարդկանց և բարքերին հանդեպ շատ ուշադիր:

«Նյու Յորքը, արդարև, պատասխանատու է գրողի երազկոտ մանկության համար» (Mable, 1912, էջ 119): Իրվինգը լավ ծանոթ էր Նյու Յորքը շրջապատող երկրին: «Նա հաճախ էր գնում գետի մոտ և վայելում բնության գեղեցիկ տեսարանների ներդաշնակությունը: Սակայն Իրվինգի ստեղծագործություններից ամենաինքնատիպներն ու ամենաբնորոշիչները գրվել են Անգլիայում: Այդ ժամանակահատվածում նա ամեն կերպ փորձում էր իր աշխատանքներում արտացոլել Անգլիայի գեղեցկությունը, հնագույն կառույցների և տեղանքների անկրկնելի համադրումը: Սակայն

Հադսոն գետի հովիտը շարունակում էր Բնալ այն հիմքը, որի վրա նա ստեղծագործում էր. չէ՛ որ այն իր մանկության հիմքն էր» (Mable, 1912, էջ 120):

Այստեղ նաև հարկ է հիշատակել մի կարևոր միջադեպ, որը պատահել էր գրողի վաղ տարիքում: Մանուկ հասակում նա անմիջական օրհնանք էր ստացել երկրի նախագահից Ջորջ Վաշինգտոնից, որի պատվին էլ Իրվինգին ծնվելիս անվանակոչել էին Վաշինգտոն: Ըստ պատմության՝ Իրվինգի մայրը մի օր չափազանց ոգևորված հետևում է հերոսին (նախագահին), նրա հետևից մտնում խանութ, մոտենում նախագահին և ներկայացնում իր որդուն՝ ասելով. «Ահա, Ձերդ գերագանցություն, այս բալիկին Ձեր պատվին ենք անվանել Վաշինգտոն» (Warner, 1881, էջ 23): Այնուհետև նախագահ Վաշինգտոնը իր ձեռքը դնում է Իրվինգի գլխին և օրհնում նրան: Եվ, անկասկած, այս միջադեպն իր ազդեցությունն է ունենում Իրվինգի «Վաշինգտոնի կյանքը» ստեղծագործությունը գրելիս:

Գրողը դպրոցում եղել է որևէ կերպ աչքի չընկնող, ինքնամոլոր աշակերտ: Նա չէր սիրում սովորել, փոխարենն անընդմեջ կարդում էր: Վիլլիամսը շատ դիպուկ է գրում այն մասին, թե ինչ է ստացել Իրվինգն իր կրթությունից. «Խելամիտ կլինի ասել, որ նա կրթություն ստանալիս ձեռքբերումների պակաս ուներ, երբ ավարտեց Հենդերսոնի և Ֆիսկերի՝ այդ ժամանակվա գիմնազիայի շրջանավարտների հետ: Հանրահաշվի և բարձրագույն մաթեմատիկայի հետ նա ոչ մի առնչություն չուներ: Ուղղագրությունն ու կետադրությունը պետք է գաղտնի փայլին, և նրա միակ ուժը իր արձակ գրելու և թեթև գրականություն կարդալու մեջ էր» (Williams, 1935a, էջ 14-15):

Իրվինգի գրական առաջին փորձը եղել է փոքրիկ պիես գրելը, երբ նա տասներեք տարեկան էր: Պիեսը ներկայացվում է գրողի ընկերոջ տանը, որտեղ էր այդ օրերի հայտնի դերասանուհի տիկին Մելմոթը: Պիեսը Իրվինգն այսպես է այն մեկնաբանում. «Արդարացի կլինի ենթադրել, որ այն ուներ դրամատիկական մեծ թերություններ» (Irving, 1857a, էջ 35): Այդուհանդերձ, այս միջադեպը խոսում է Իրվինգի՝ վաղ տարիքից գրելու ցանկություն ունենալու մասին:

Իրվինգի ստեղծագործական կյանքի երեք հիմնական փուլերը

Իրականում Իրվինգի աշխատանքները կարելի է տարբեր կերպ բաժանել՝ ըստ ուսումնասիրության ուղղվածության, սակայն այստեղ կդիտարկվեն միայն երեքը՝ վաղ, միջին և ուշ շրջանի գործեր: Առաջին կարևոր երկը «Մալմագունդին» է: Պիեսը Իրվինգը մեկնաբանում է էստեների հեղինակների մտադրությունների մասին. «Մեր նպատակն է խրախուսել երիտասարդներին, բարեփոխել մեծահասակներին, շտկել քաղա-

քի խնդիրները և դատապարտել դարաշրջանը: Սա ծանր գործ է, այդուհանդերձ մենք վստահ պարտավորվում ենք դա անել» (Irving, 1857a):

Հավանաբար, ամենանշանակալի աշխատանքն այս վաղ շրջանում Դիդրիխ Նիքերբոքեր կեղծանվան ներքո գրված «Նյու Յորքի պատմությունն» է՝ «աշխարհի սկզբից մինչ հոլանդական դինաստիայի ավարտը» (1809): Որոշ քննադատներ այն համարում են ազգային կարևորություն ներկայացնող գրական առաջին ստեղծագործությունը, որը գրել է ամերիկացի հեղինակը: «Կարևոր առանձնահատկություն է համարվում Նիքերբոքերի պատմության մեջ գրական ուրույն ոճի զարգացումը, ուր դժվար էր հստակ հասկանալ՝ արդյոք նա ինչ-որ մեկին կրկնօրինակում է, թե՛ ոչ» (Cairns, 1930, էջ 164): Իրվինգի կողմից ընտրված ծաղրի առարկաները, հավանաբար, ընտրված չէին այն պատճառով, որ նա դրանց դեմ էր, այլ պարզապես դրանք հասանելի թիրախներ էին գրողի համար: Սկզբում հոլանդական ընտանիքների ժառանգներից մի քանիսը դժգոհություն են հայտնում իրենց նախնիներին երգիծանքով անդրադառնալու համար, բայց որոշ ժամանակ անց նրանք ընկալում են Իրվինգի երգիծանքի բուն նպատակն ու հանճարեղությունը և բարձր են գնահատում այն: Իրվինգին հատուկ էր անսահման բարեհոգությունը: Նրա հումորը հիմնականում կազմված էր փաստերի և անհեթեթության, ակնհայտի և անհնարի համադրությունից, որոնք գրված էին նույնատիպ սթափությունաբ: Նաև ստեղծագործության տարբերակներն ու կերպարներն իրականության շունչ էին հաղորդում:

Իրվինգի երկրորդ շրջանի ստեղծագործությունները շատ առուժներով նույնատիպ էին, բացի այդ, այս գործերը բացահայտում են հեղինակի տպավորություններն իբրև ճանապարհորդող, քննադատ, էսսեագիր: Դրանցում ակնայտ երևում է Անգլիայի, Իսպանիայի և Ամերիկայի ազդեցությունը: Բանն այն է, որ գրողն այս շրջանում՝ շատ է ճանապարհորդել Եվրոպայով: Հենց այս ժամանակ էլ նա գրել է իր հայտնի ստեղծագործությունները՝ «Էսքիզների գիրք»-ը (Sketch Book, 1820), «Բրեյսբրիջ հոլ»-ը (Bracebridge Hall, 1822), «Ճանապարհորդի պատմություններ»-ը (Tales of a Traveller, 1824): «Էսքիզների գիրք» ժողովածուն նրա ամենահայտնի և ամենասիրված ստեղծագործություններից է: Այն նախատեսված է եղել հենց ամերիկացի ընթերցողի համար, տպագրվել է Նյու Յորքում՝ չորս կամ հինգ էսքիզներով: Այստեղ ամեն ընթերցող կարող է գտնել իր սիրելի էսքիզը, չնայած որ սրանցից կոնկրետ մի քանիսն են առավել սիրվել ընթերցողների շրջանում: Դրանցից են՝ Սուրբ ծննդի մասին պատմվածքների մասին շարքը, «Ձկնորսը» (The Angler), «Ռիպ Վան Վինկլը» (Rip Van Winkle), «Քնկոտ հովտի մասին լեգենդը» (The Legend of Sleepy Hollow) և այլ ստեղծագործություններ: «Էսքիզների գիրք»-ը լուրջ ներդրում էր ամերիկյան ռոմանտիզմի զարգացման մեջ: Իրվինգը խառնվածքով հակված էր ռոմանտիզմին. անգործության հակվածությունը նրան անհամապատասխան էր դարձնում ռեալիզմին, որը միշտ գիտական է և հիմնված է

հետազոտությունների վրա: Վաղ մեկուսացումը նրան դարձնում է երագող. մանկության տարիներին սնվելով ծնողների պատմած հիշողություններով՝ նա իդեալականացնում է նրանց մանկության երկրները և գերադասում կերտել ռոմանտիզմի երագլոտ մեղմությունը: Ստեղծագործելիս նա ծայրահեղությունների չի գնում. նրա վաղ տարիքի ուսումն ու դաստիարակությունը դա իրեն թույլ չեն տալիս: Ոճային առումով այստեղ տեղ գտած ստեղծագործություններն առանձնապես նման չեն ոչ «Սալվագունդի», ոչ էլ Նիքեթրեթերի «Նյու Յորքի պատմությունը» ստեղծագործություններին, թեև նշված երկու ստեղծագործություններից էլ այստեղ առկա են տարրեր: «Էսքիզների գրքի» շնորհիվ Իրվինգն առաջին անգամ իրական համբավ է վայելում, քանի որ հենց այս ստեղծագործությունը նրան բերեց լայն ճանաչում նաև Ամերիկայից դուրս:

«Բրեյսթրիջ հոլ»-ը անգլիական գյուղական կյանքի մասին էսքիզների և պատմվածքների շարք է: «Իրվինգի պատմություններում, այդ թվում և «Բրեյսթրիջ հոլում» կարծես թե զգալի է կյանքի ու գործողությունների պակաս. երկերում սակավ է պատմողական մասը, փոխարենը գերիշխում են մարդկանց և տեսարանների հարուստ նկարագրությունները: Կա այուժեի պակաս՝ պատմություն ստեղծելու և միապաղաղությունը կոտրելու համար» (Williams, 1935a): Այնուամենայնիվ, կան լավ այուժեով պատմվածքներ, օրինակ՝ «Գեր պարոնը» (The Stout Gentleman), «Դոլֆ Հայլիգերը» (Dolph Heyliger), «Սալամանցայի ուսանողը» (The Student of Salamanca), բայց կասկած է առաջանում, թե արդյոք դրանցից որևէ մեկն իր հայտնի լինելով կարող է մոտ լինել «Ռիպ Վան Վինկլին» կամ «Քնկոտ հովտի մասին լեգենդին»: Այսպիսով պարզ է դառնում, որ Իրվինգի այն ստեղծագործություններն են սիրվել ու ավելի հայտնի դարձել, որոնք գրվել են իր խառնվածքին հատուկ ոճով, այն է՝ տեսարանների հարուստ նկարագրություններով, բայց գործողությունների պակասով:

Իսպանական թեմատիկայով գրքերի ուշագրավ շարքը նույնպես պատկանում է գրողի ստեղծագործական միջին կամ երկրորդ շրջանին: Այս շրջանի գործերն Իրվինգը սկսում է «Կոլումբոսի կյանքը» (1828) ստեղծագործությամբ, ապա գրում է նաև «Ալիամբրա» անվամբ արաբա-իսպանական պատմվածքների ժողովածուն: Այս գործերում կարելի է հանդիպել պատմական փաստերի ճշգրտության, ջերմ մարդկային հետաքրքրության, նաև արաբա-իսպանական մշակութային և կրոնական առանձնահատկություններին, իրական և անիրական երևույթների միաձուլմանը, ինչպես, օրինակ, «Ալիամբրա» ժողովածուում տեղ գտած «Սիրո ուխտավորը» պատմվածքում: Մա մի փիլիսոփայական սրամիտ լեգենդ է, որում առկա են հեքիաթին հատուկ շատ հատկանիշներ՝ թռչող գորգ, խոսող թռչուններ, կախարդական նժույգ և այլն: Այստեղ անգամ կրոնական սահմանափակումներն են դուրս գալիս, երբ խոսքը վերաբերվում է սիրուն. արքայազն Ալ Քամլն ու արքայադուստրը տարբեր կրոնների էին դավանում:

«Կոլումբոսի կյանքը» (1828) ստեղծագործությանն անդրադառնալիս՝ կարևոր է նշել, որ բացի այն փաստից, որ գիրքն ունի իր ուրույն «երանգավորում»։ այն շարունակում է մսալ Կոլումբոսի լավագույն կենսագրականներից մեկը։

Առհասարակ, Իրվինգի ռոմանտիկ ստեղծագործությունների շարքը սկիզբ առավ «Գրանադայի պաշարումը» ստեղծագործությունից, և հետաքրքրական է, որ գրողը դրան հաղորդեց առավել ռոմանտիկ, քան պատմական մթնոլորտ։ Իր իսպանական թեմատիկայում Իրվինգն ավելի քան ռոմանտիկ է, եթե իր այս գործերը դիտարկենք պատմական տեսանկյունից։ Նա միայն կենտրոնանում է իր հերոսների լավ կողմերի վրա. օրինակ անտեսում է իսպանացի ժողովրդի բարբարոսությունները և այդ ժամանակվա բոլոր պատմական բացասական փաստերը։ Այստեղ նույնպես երևում է Իրվինգի մարդկային տեսակի արտացոլանքը. անգամ բացասական երևույթներին նա կարողանում էր դրական կամ առնվազն հումորով անդրադառնալ։

«Շրջագայություն պրերիաներով» ստեղծագործության մեջ քսանվեց տարվա ընթացքում առաջին անգամ Իրվինգն անդրադառնում է ամերիկյան կյանքին։ Այստեղ նա նկարագրում է, թե ինչպես է թափառում մի խումբ հետազոտողների հետ անծանոթ տարածքներով՝ Արկանզասի և Կարմիր գետերի միջև։ Եվս նույն թեմայով երկու ստեղծագործություններ են «Աստորիա»-ն և «Նավապետ Բենեվիլի արկածները»։ 20-րդ դարի գրողները մեծ ուշադրություն են դարձրել «Աստորիա» գրքի հեղինակային աշխատանքին։ Օրինակ՝ Վ. Բ. Քերնսն ասել է. «Անգամ մինչ «Քրայտնի ժողովածուի» հայտնվելը Իրվինգը Ջոն Ջեյքոբ Աստորից խնդրանք էր ստացել գրել Խաղաղ օվկիանոսի ափին այդ վաճառականի բիզնես նախաձեռնությունների պատմության մասին։ «Աստորիան» գրելու ժամանակ եղած հանգամանքները շատ հակասություններ են առաջացրել՝ այդպիսով ցույց տալով, թե որքան նախանձախնդիր է երկիրը հետևում իր գրողների գործունեությանը։ Անառարկելի փաստերն այն են, որ Ջոն Ջեյքոբ Աստորն առաջարկել է Իրվինգին վճարել պատմությունը գրելու համար, և, որ վերջինիս առաջարկով Իրվինգի եղբորորդի Պիերն ընդունվել է աշխատանքի։ Իսկ գիրքը Վաշինգտոն Իրվինգի կողմից անվանվել է «Աստորիա»» (Cairns, 1930, էջ 171)։

Իրվինգի կյանքի վերջին շրջանին են պատկանում նրա կենսագրական գրքերը՝ «Մահումետի կյանքը», «The Life of Mohamat», «Գոլդսմիթի կյանքը», «The Life of Goldsmith», «Վաշինգտոնի կյանքը» «The Life of Washington»: Ընդունված է համարել, որ «Գոլդսմիթի կյանքը» ամենահաջողված կենսագրական գիրքն է այս վերջին շրջանում է, իսկ «Մահումետի կյանքը»՝ հակառակը։

«Գրեհեմ» ամսագիրը, անդրադառնալով Իրվինգի «Գոլդսմիթի կյանքը» ստեղծագործությանը, գրում է. «Ոչ մի կենդանի էակից ավելի հաջողված կենսագրական հնարավոր չէր ակնկալել, քան Վաշինգտոն

Իրվինգինը, և, այսպիսով, մենք ունենք մի այնպիսի օրինակ, որն ավելի մոտ է իր թեմայի սրտին և ուղեղին, քան անգլիական ցանկացած գրականության մեջ եղած այլ օրինակ: Կան Գոլդսմիթի կենսագրության երկու օրինակներ ևս՝ Պրիորի և Ջոն Ֆոսթերի գրածները, որոնց հետ, անկասկած, կարելի է համեմատել Իրվինգի գրածը: Դրանք արժանի գործեր են, բայց ոչ Իրվինգի գրածին հավասար՝ Գոլդսմիթի կերպարի և կյանքի կենդանի տպավորությունը ընթերցողին փոխանցելու առումով: Իրվինգն ինտելեկտուալ առումով շատ նման է Գոլդսմիթին» (Williams, 1935b, էջ 223): Ահա, թե ինչպես է հենց ինքը՝ Իրվինգն արտահայտվում Գոլդսմիթի մասին իր իսկ ստեղծագործությամբ մեջ. «Քիչ գրողներ կան, որոնց նկատմամբ ընթերցողն այնպիսի անձնական ջերմություն է զգում, որքան Օլիվեր Գոլդսմիթի հանդեպ, քանի որ քչերն են ունեցել իր ստեղծագործությունների հետ նույնականացնելու նման կախարդական շնորհ: Մենք կարդում ենք նրա կերպարի մասին յուրաքանչյուր էջում և ծանոթանում նրան հենց կարդալու ընթացքում: Անթաքույց բարեհոգություն, որը փայլում է նրա աշխատանքի ընթացքում, քմահաճ, բայց հաճելի հայացքներ՝ մարդկային կյանքի և մարդկային բնության հանդեպ, թեթև հումոր, որը հաջողությամբ զուգադրվում է լավ զգացողությունների և ողջախոհության հետ...» (Irving, 2008, էջ 6): Իրվինգի գրած այս տողերը կարդալիս տպավորություն է ստեղծվում, որ մենք հենց իր մասին ենք ընթերցում: Այդ իսկ պատճառով Գոլդսմիթին այդքան նման խառնվածքով Իրվինգն ունակ էր հասկանալ նրան և լավագույնս ներկայացնել, սակայն Մահոմետի կենսագրությունը գրելիս հեղինակը ոչ խառնվածքով էր նրան նման, ոչ էլ համարժեք ուսուսասիրություն էր կատարել: Իսկապես, Մահոմետի թեման Իրվինգի համար նույնիսկ իր լավագույն տարիներին շփոթեցնող կլիներ: Այստեղ նա անգամ չէր էլ փորձում անդրադառնալ մարգարեի վերաբերյալ քննարկվող խնդիրներին: Աշխատանքում Մահոմետի մահը ներկայացված է առաջին փոքր հատորի վերջին մասում, իսկ ժամանակակից նյութը մանր-մունր կռիվների ու թշնամությունների հոգնեցուցիչ տարեգրություն է: Նույնիսկ նմանատիպ դրաման, որն ավելի լավ է ներկայացված «Գրանադայի պաշարումը» ստեղծագործության մեջ, այստեղ հապաղում և կրկնվում է: Նա հաջողում է այն ժամանակ, երբ կա իրեն հոգեհարազատ թեմա, որով ինքն անկեղծորեն հետաքրքրված է:

Վաշինգտոն Իրվինգի դերն ամերիկյան փոքր արձակում

Իրվինգի գրական ժառանգության մեջ առանձնակի դեր են կատարում նրա պատմվածքներն ու նովելները: Գրողն այստեղ հանդես է գալիս որպես իրապես ժամանակակից հեղինակ: Իրվինգը եղավ այն հեղինակը, որն առաջին անգամ առաջադրեց ամերիկյան գրականությունը: Դեռ համաշխարհային ճանաչում չունեցող ամերիկյան գրականությանն անհրա-

Ժեշտ էր գտնել գեղարվեստական նոր խնդիրներ և դրանց մարմնավորման ուրույն հնարներ: Վաշինգտոն Իրվինգն այստեղ ունեցավ անգերազանցելի դեր: Իրվինգի գրական գործունեության ընթացքում մեծ դեր են խաղացել նրա եվրոպական ճանապարհորդությունները, եվրոպական պատմության ու մշակույթի խորը ուսումնասիրությունը: Եվ, փաստորեն, Իրվինգն իր ռոմանտիկ պատմվածքներում սաղմնավորում և զարգացնում է այն ամենը, ինչ արդեն կար եվրոպական մշակույթում՝ դրան համադրելով Ամերիկայի պատմությունն ու տեղացիների մտածողությունը, բնավորությունն ու հոգեբանությունը: Ֆ. Լ. Պատտին անդրադառնում է Իրվինգի դերի կարևորությանը ամերիկյան գրականության զարգացման գործում: Նա ներկայացնում է, թե ինչպիսի ներդրում է ունեցել գրողը պատմվածքի ժանրում: Այսպես է նա սկսում իր «Պատմվածքի ժանրի զարգացումը ամերիկյան գրականության մեջ» («The Development of the American Short Story») գիրքը. «Ամերիկյան պատմվածքների ժանրը սկիզբ է առել 1819 թվականին՝ Վաշինգտոն Իրվինգի հետ: «Էսքիզների գրքից» առաջ Ամերիկայում գոյություն է ունեցել պատմվածքների ժանրը, այդ ժանրում ստեղծագործողներից շատերն են համարվել կարևորություն ներկայացնող գրողներ: Նրանցից են՝ Ֆրանկլինը, Ֆրոնյուն, Չարլզ Բրոքդեն Բրաունը, սակայն ժամանակակից պատմվածքի ձևի տեսանկյունից դրանցից ոչ մեկը մեզ այդ ժանրով հետաքրքրված չի պահում: Ֆրանկլինը գրում էր անեկդոտներ դիդակտիկ մտադրությամբ: Ֆրոնյուն ազատվում է պատմողական ժանրի քարոզչությունից, մասամբ նաև չափածոյից: Դրանցից ոչ մեկն էլ չի ունեցել ազդեցություն պատմվածքի զարգացման վրա: Ձևի ուսումնասիրությունն իր ամերիկյան փուլերով սկսվում է Իրվինգից (Pattee, 1923): Փաստորեն, ըստ գրքի հեղինակ Պատտիի, «Էսքիզների գրքից» առաջ ոչ մեկը չի ունեցել լուրջ ազդեցություն ամերիկյան պատմվածքի ժանրի զարգացման վրա:

Բացառելով այնպիսի մուլեգին կերպարների էսքիզները, ինչպիսիք է «Կինը» և «Այրին և նրա որդին»՝ «Էսքիզների գրքում» և իր հետագա ժողովածուներում՝ Իրվինգը գրել է մոտ քառասունույթ պատմողական դրվագներ, որոնք, ընդհանուր առմամբ, կարելի է անվանել պատմվածքներ: Դրանք կարելի է նաև դասակարգել չորս մասերի. նախ՝ սենտիմենտալ հեքիաթներ՝ տվյալ ժամանակին հատուկ ձևով, ինչպես, օրինակ, «Գյուղի հպարտություն»-ն է, «Անետ Դելաբր»-ը և «Այրիի փորձություն»-ը: Երկրորդը՝ Նիքերբոքերի յոթ հեքիաթներն են՝ «Ռիփ Վան Ուինքլ», «Քնկոտ հովտի մասին լեգենդը», «Դոլֆ Հայլիգերը»՝ «Սատանան և Թոմ Ուոքերը», «Վոլֆերտ Վեբերը», «Մեամորթ ձկնորսի արկածները» և «Հյուրեր Գիբեր կղզուց», երրորդ՝ այլ հեքիաթներ՝ ոգեշնչված գերմանական սիրավեպով, ինչպես, օրինակ, «Ուրվական փեսան» և Ճամփորդի հեքիաթների I և III մասերը: Չորրորդն արաբական հեքիաթների ու իսպանական սիրավեպի

էսքիզներն են, ինչպէս, օրինակ, «Ալիամբրան» և «Իսպանիայի պաշարման մասին լեգենդները»:

Իրվինգի ստեղծագործություններից բացի՝ հարկ է նաև կրկին անդրադառնալ նրա անհատականությանը: Չէ որ այն մեծ դեր է ունեցել իր յուրաքանչյուր ստեղծագործական փուլում: Իրվինգի մասին՝ որպէս անհատ, չափազանց տեղին և ընդգրկուն է գրել Ջեյմս Ռասսել Լոուելը. «Բայց թո՛ւյլ տվեք ինձ ասել, թե ինչ էս ես ազնվորեն զգում. իսկական բանաստեղծական սրտին ավելացրեք ք Ռիկ Սթիլի զվարճանքը, նաև էդիտնի ամբողջ գրական ոճը, միայն թե առանց նրան երբեմն հատուկ ստույնության: Այս միասնությունը մի լավ խառնեք՝ ավելացնելով հումորը՝ որպէս կախարդանք, հետո մի հիանալի անգլիացի ծեր ջենթլմեն, նորից լավ խառնեք ք այս ամենն ու ըստ ճաշակի քաղցրացրեք և ապա այդ խառնուրդը քամեք այնպէս, որպէսզի միայն ամենալաճառ ու ամենապարզը մնա: Թողե՛ք այն դրսում, մինչ որևէ մեկին այն կհասնի կանաչ տերևների միջով թափանցող ջերմ ու ծուլլ արևի միջոցով: Եվ դուք կգտնեք բնության ընտրությունը. անուն, որին չի կարելի լիիրավ անվանել ո՛չ անգլիացի, ո՛չ էլ յանկի, այլ պարզապէս Իրվինգ» (Lowell, 1891, էջ 85):

Ջորջ Ուիլիամ Կուրտիսը Վաշինգտոն Իրվինգի հիշատակին նվիրված «Իրվինգիանա» պատմական ամսագրում գրում է. «Իրվինգի մեջ մարդն ու հեղինակը մեկ էին: Նույն փայլուն հումորը անձնական թույնով չաղճատված, նույն քաղցրությունը, հանճարեղությունը և գրավչությունը, որը գրողին ստիպում էր սիրել իր ընթերցողներին, նաև մարդ արարածին ստիպում էր սիրել իր ընկերներին: Օժտված լինելով ուրախ խառնվածքով, մտքի և զգացմունքի զվարթ հավասարակշռությամբ, որը ծնում է դառը թշնամանքը կանխող կարեկցանք՝ նա անցել է մեր քաղաքականության ամենասուր պայքարի միջով ո՛չ առանց հետաքրքրության, բայց առանց դառնության՝ յուրաքանչյուր կողմի նկատմամբ ունենալով ամենաքնքուշ հարգանքը» (Curtis, 1860, էջ 55):

Եվ իսկապէս, Իրվինգի գործերն իր իսկ արտացոլանքն են: Նա այն գրողներից է եղել, ով գնահատված է եղել նաև իր կենդանության օրոք, և հավանաբար դա է եղել պատճառ, որ նրա ոգևորությունը գրելու հանդէպ չի մարել նույնիսկ իր մեծ տարիքում: «Վաշինգտոն Իրվինգի կյանքն ամենագունեղներից է եղել, որ երբևէ գրողը կարող է ունենալ: Նա իր հանճարը հայտնաբերել է վաղ տարիքում: Մեծ սիրով է ընդունվել իր հայրենակիցների կողմից, կարողացել է համապատասխանել այն ժամանակաշրջանի գրական պահանջներին, որում նա հայտնվել է: Հաղթանակները հեշտ են տրվել նրան, և նույնքան էլ հեշտ պահպանվել: Նա նշանավոր տեղ է զբաղեցրել գրականության հանրապետությունում, առատաձեռնորեն է պարգևատրվել իր գրական գործունեության համար, հմայել է իր ժամանակակիցներին իր քաղաքավարությամբ ու համեստությամբ: Ապրել է երկար, իմաստուն, երջանիկ և մահացել խոր ծերության մեջ լի եռանդով» (Stoddard, 1879, էջ 1):

Իրվինգը ամերիկյան գրականության ամենասիրված հեղինակներից մեկն է: Նրան մինչ օրս էլ հիշում են իր կյանքի ու իր ստեղծագործությունների մաքրությամբ, նա լցված էր իր իսկ լուսավոր հանգստությամբ և հանդարտ գեղեցկությամբ: «Նրա համեստությունը չափից ավելին էր: Անհնար է իր աշխատանքներում կամ նամակագրություններում գտնել տողեր, որոնցում նա կխոսեր իր աշխատանքների արտասովոր արժեքի մասին: Հակառակը, որքան էլ, որ նրան գովաբանեին, նա չէր հավատում, որ արժանի էր դրան: Նա միշտ անհանգիստ էր, թե ինչ կասեն քննադատներն իր գործերի որակի մասին: Հետևյալ կարծիքները նույնպես կփաստեն, որ Վաշինգտոն Իրվինգը չափազանց համեստ էր: Օրինակ՝ Թոմաս Մորի մեկնաբանությունը դիպուկ արտացոլում է գրողի համեստությունը, երբ ասում է, որ Ջեֆրի Քրայտնը ոչ թե ուժեղ էր առյուծի նման, այլ ընտանի կենդանու նման հաճելի» (Vincent, 1906, էջ 10): Ռիչարդ Բուրտոնն իր «Ամերիկայի գրական առաջնորդները» աշխատության մեջ նույնպես անդրադարձել է Իրվինգի մարդկային տեսակին. «Նա զարմանալիորեն համեստ էր իր «Էսքիզների գրքի» արժանիքների գնահատման մեջ: Նրա խոսքերով՝ ինքը պարզապես ցանկացել է «Ֆլեյտայով նվագակցել Ազգային համերգում»: Այնուամենայնիվ, նա նշանավոր և անմահ գործ էր արել, որովհետև դա իր ուժերին հասու էր: Եվ ոչ արտասահմանում ապրելը, ոչ էլ թեմաները, որոնք բացարձակ ամերիկյան չէին, չկարողացան թաքցնել այն հիմնական որակները, որոնք իր գրչին հաղորդել են հայրենի երանգ» (Burton, 1904, էջ 22):

Այսպիսով շատ են Իրվինգի անհատականության առանձնահատկությունները, որոնք արտացոլվել են իր գրական ոճում: Իր բնավորության մաքրությունը կապված է արտահայտման պարզության հետ, իսկ լուսավոր տրամադրությունը երևում է իր պատմվածքներում առկա հումորում: Սրանք, անխոս, ազդել են իր բառապաշարի, ինչպես նաև նախադասությունների ընտրության վրա: Գրողի ոճին ուղղակիորեն անդրադառնալուց առաջ անհրաժեշտ է հաշվի առնել նրա վերաբերմունքը գրական ստեղծագործություններում եղած ձևի և բովանդակության հանդեպ: Այն որոշակի ազդեցություն է ունեցել նրա արտահայտչամիջոցների ընտրության հարցում: Չկա որևէ պատճառ կասկածելու, որ Իրվինգն ուներ հստակ վերաբերմունք ստեղծագործության բովանդակության և կառուցվածքի վերաբերյալ: 1824 թվականին Իրվինգն այսպես է արտահայտվել իր գրած սյուժեների մասին. «Ինձ թվում է, որ այն, ինչը ես գնահատում եմ իմ ստեղծագործություններում, վրիպում է իմ ընթերցողների մեծ զանգվածի ուշադրությունից: Ընթերցողներիս ավելի հետաքրքրում է պատմությունն ինքնին և ոչ այն ձևը, որում այն ներկայացվում է: Անձամբ ես համարում եմ, որ պատմությունը լոկ շրջանակ է, որում կարելի է ծավալել գրական ամբողջ նյութը» (Irving, 1857b, էջ 64): Իրվինգն այս սկզբունքն է կիրառել իր գրեթե

բոլոր պատմվածքները գրելիս: Ահա այսպիսի վառ օրինակ է «Ռիպ Վան Վինկլ»-ը, որում եղած գործողությունները շատ սահմանափակ են: Պատումի ընթացքում գրեթե որևէ գործողություն տեղի չի ունենում: Արդյունքում էջերը լցվում են նկարագրական նյութերով: Ահա և հետևյալ օրինակով երևում է, թե ինչպես է Իրվինգն իր գրական ոճը ձևավորում վերը նշված մեթոդով. «Այս հեքիաթային լեռների ստորոտին ճանապարհորդը, հավանաբար, զանազանել է գյուղից ոլորվելով վեր բարձրացող թեթև ծուխը, և տանիքների ծածկը, որը փայլում է ծառերի մեջ, հենց այնտեղ, որտեղ լեռնաշխարհի կապույտ երանգները հալչում են ավելի մոտ լանդշաֆտի թարմ կանաչի մեջ: Դա մի հնամենի փոքրիկ գյուղ է, որը հիմնադրվել է հուլանդացի որոշ գաղութարարների կողմից, զավառի վաղ ժամանակներում, հենց բարի Պիտեր Ստյուվեսանտի կառավարության սկզբում (թող, որ նա հանգչի խաղաղությամբ)» (Irving, 1873, էջ 50):

Վերը նշված հատվածը հստակ ցույց է տալիս, թե որքանով է այս պատմվածքի ոճը տարբերվում այն պատմվածքներից, որոնցում զարգանում է սյուժեն: Այս հատվածում միակ գործողությունը, որ կարելի է տեսնել՝ «ոլորվելով վեր բարձրացող թեթև ծուխն» է: Այսպիսի գրական մոտեցումը հասուկ է Իրվինգին և իր հանդարտ, մանրամասներին ուշադիր ու անշտապ խառնվածքին: Ի տարբերությամբ այն տեսարանների, որոնցում գերիշխում են գործողությունները, պահանջվում է այլ բառապաշար, և երկրորդ՝ սյուժեի զարգացումը չափազանց մեծ շեշտադրումներ է անում գործողության և հերոսների կերպարների վրա, և ոչ թե նկարագրությունների: Ենթադրվում է, որ Իրվինգն իր գործերում փոխարենը գրելու խոսքեր, որոնք ստեղծում են միայնության և լռության տպավորություն, պիտի կիրառի շարժումներ և սյուժեի զարգացում ցույց տվող բառապաշար: Այս առումով հետաքրքրական է բացահայտել, թե ինչ է կարծում հենց ինքը՝ Իրվինգը, պատմվածքների և դրանցում եղած բովանդակային և կառուցվածքային առաջնայնությունների մասին: Ահա նրա մեկնաբանությունը սրա վերաբերյալ. «Սա մտքերի, զգացմունքների և լեզվի խաղ է, կերպարների միահյուսում, որը հեշտությամբ, բայց արտահայտիչ ուրվագծվում է. առօրյա կյանքի տեսարանների ծանոթ և ճշգրիտ պատկերում և կիսաթաքնված հումոր, որը հաճախ թափանցում է այդ ամենի միջով: Ահա սա այն է, ինչին ես ձգտում եմ և ինչից հաճույք եմ ստանում, երբ որ հասկանում եմ, որ դա ինձ հաջողվել է» (Irving, 1857b, էջ 64):

Ահա ևս մի քանի օրինակ Իրվինգի ստեղծագործություններից, որտեղ պարզ երևում է, թե ինչպես է նա ստեղծագործելիս կյանքի կոչում իր պատկերացումները. «Ռիպը, սակայն, այն երջանիկ մահկանացուներից էր, հիմար, բայց և լավ հարմարվող բնավորությամբ, որոնք աշխարհին թեթև են վերաբերվում, ուտում են սպիտակ հաց կամ սև հաց, որը կարելի կլինի ձեռք բերել նվազագույն վարանումով և ջանքերով, և

նախընտրում են սովամահ լինել մի կոպեկով, քան աշխատել մեկ ֆունտի դիմաց: Եթե միայն իրեն մնար, ապա նա կապրեր իր կյանքը լիակատար գոհունակությամբ: Բայց կինը շարունակում էր շաղակրատել նրա ականջներում իր պարապության, իր անհոգության և իր ընտանիքին կործանման դուռը տանելու մասին» (Irving, 1873, էջ 53-54):

«Առավոտ, կեսօր և գիշեր նրա լեզուն անդադար աշխատում էր, և այն ամենը, ինչ Ռիպն ասում կամ անում էր, անկասկած, տնային պերճախոսության հոսք էր առաջացնում: Ռիպը նման դասախոսություններին արձագանքելու միայն մեկ տարբերակ ուներ, և հաճախակի օգտագործման շնորհիվ այն դարձել էր սովորություն: Նա թոթվում էր ուսերը, օրորում գլուխը, իջեցնում աչքերը, բայց ոչինչ չէր ասում...» (Irving, 1873, էջ 54):

Իրվինգի բառերի ընտրությունը հատկանշական են Ռիպի մասին այս նկարագրության մեջ: Դրանք պարզ են, քանի որ պատկերում են այն պարզ ու հասարակ կյանքը, որով ապրում էր պատմվածքի հերոսը: Մտքի խաղն իրականացվում է իմաստալից և պատկերավոր բառերի կիրառմամբ:

Իրվինգի վերաբերմունքն իր ոճի հանդեպ, մասնավորապես բառապաշարի ընտրության հարցում կարևոր դեր ունի: Նա կարողանում է կառուցել հստակ, պատկերավոր և հարուստ խոսք: Իրվինգն իր ստեղծագործությունների մասին այսպես է գրել. «Ես գերադասել եմ աշխատել էսսենների և պատմվածքների ոճով, քան գրել երկար ստեղծագործություններ, որովհետև ես ընտրում եմ հավատարիմ մնալ այն գրելու ոճին, որը հատուկ է ինձ, և չընկնել որևէ այլ գրողի ձևի կամ ոճի ազդեցության տակ: Իսկ նման ստեղծագործություններում պահանջվում է մտքի մշտական ակտիվություն և կատարման ճշգրտություն, ավելին, քան աշխարհը կարող է պատկերացնել: Համեմատաբար հեշտ է ցանկացած չափի պատմություն փչելը, եթե մտքում արդեն ունեք ուրվագիծ և կերպարներ: Չուտ ստեղծագործության հիմնական սյուժեի հանդեպ հետաքրքրությունը նույնպես ընթերցողին տանում է անփույթ գրված էջերով, և հաճախ հեղինակը կարող է իրեն թույլ տալ ձանձրալի դառնալ գրքի հատորի կեսից, եթե պատրաստվում է գրել ինչ-որ տպավորիչ տեսարան վերջում: Բայց այս կարճ ստեղծագործություններում յուրաքանչյուր էջ պետք է ունենա իր կարևորությունը: Հեղինակը պետք է անընդհատ սուր լինի. Վայ նրան, եթե նա արտահայտի վտանգավոր նախադասություն կամ հիմար էջ գրի: Քննադատները վստահաբար կհարձակվեն նրա վրա...» (Irving, 1857b, էջ 64):

Իրվինգի պատմվածքների ծավալի մասին խոսելիս կարևոր է նշել, որ դրանք համեմատաբար հակիրճ են: Այս առումով Իրվինգի գործերը վերլուծելիս պետք է ուշադրությունը սևեռել նրա կարճառոտ պատմվածքների թողած ազդեցության վրա: «Ձկնորսը» (“Angler”)

պատմվածքից հետևյալ մեջբերումը կծառայի որպես օրինակ, թե ինչպես է նրա պատմվածքների ձևն ազդել ստեղծագործության ոճի վրա. «Ասում են, որ շատ անհաջող տղաներ Ռոբինսոն Կրուզոյի պատմությունը կարդալուց հետո ստիպված են փախչել ընտանիքից և ծովային կյանքով ապրել: Եվ ես կասկածում եմ, որ նույնպես այս արժանավոր պարոններից շատերը, որոնց տրված է ձկնորսական ձողերով շրջել հովվական առվակների ափերով, կարող են իրենց կրթի ծագումը գտնել ազնիվ Իսահակ Ուոլթոնի գայթակղիչ էջերում: Հիշում եմ, որ մի քանի տարի առաջ Ամերիկայում մի խումբ ընկերների հետ ուսումնասիրեցի նրա «Complete Angler»-ը, և ավելին, մենք բոլորս ամբողջովին տարված էինք ձկնորսության մոլուցքով: Տարեսկզբին էր, բայց հենց որ եղանակը բարենպաստ դարձավ, և զարունը սկսեց մոտենալ ամռանը, մենք վերցրինք մեր ձկնորսական կարթածողը և գնացինք գյուղ՝ նույնչափ բացարձակ խելագարվելով, ինչպես Դոն Կիխոտն էր երբևէ խելագարվել ասպետական գրքեր կարդալուց» (Irving, 1873, էջ 440-441):

Այս հատվածում Իրվինգն ամեն մի բառ հաշվի է առնում: Ոչ մի բառ չի օգտագործվում առանց հավելյալ իմաստ բովանդակությանը փոխանցելու: Նա պետք է իր բառերը զգուշորեն ընտրեր, որպեսզի կարողանար քիչ քանակությամբ էջերում տալ մեծ բովանդակություն: Եվ քանի որ նրա պատմվածքների մեծ մասը բավականին հակիրճ են, ապա նա պետք է ուշադիր կազմեր իր նախադասությունները, որպեսզի դրանք լինեին հնարավորինս պարզ, բայց նաև բովանդակությամբ հագեցած: Այսպիսով՝ Իրվինգը կարծում էր, որ կանխամտածվածությունը ստեղծագործության ոչ միայն բովանդակության, այլ նաև ձևի որոշումն է նախքան այն գրելը:

Իրվինգի ստեղծագործությունները հակիրճ են՝ խնամքով ընտրված բառերով և նախադասություններում դրանց ճիշտ դասավորվածությամբ: Նա իր նկարագրություններում հիմնականում պարզ բառեր է կիրառում: Այս պարզությունը երբեմն թվում է մանրակրկիտ ուսումնասիրված, իսկ բառերն ընտրված են շատ միտումնավոր: Սա դրսևորվում է հետևյալ ձևով՝ պարզ արտահայտություններով, սովորական բառերի բոլորովին նոր համադրություններով, որոնք տալիս են հնության երանգ և ինքնատիպություն: Վաշինգտոն Իրվինգը ստեղծել է մարդասիրական կերպարներ՝ պարզ, ազնիվ, խոցելի, ինչպիսին հենց ինքն էր: Նա նաև կիրառել է գերբնականը որպես միջոց՝ խոսելու կարեկցանքի արժեքի մասին իր ապրած ժամանակներին հատուկ ավելի ու ավելի բազմազբաղ աշխարհում: Իրվինգի ոճի կատարելությունը մեծապես այն է, որ նա իր բառերն ու արտահայտությունները նախադասությունների մեջ համատեղում է հմտորեն և, այդպիսով, հակիրճ պատմվածքներ գրելով, կարողանում է պատասխանատվությամբ վերաբերվել պատմվածքների բառընտրությանն ու նախադասության կառուցմանը, ինչպես նաև դրանց բովանդակությանը:

Եզրակացություն

Իրվինգի գրական ոճն ու արտահայտման ձևը բացահայտում են նրան որպես իրական ժամանակակից հեղինակի: Իր գրեթե բոլոր գործերում կա այն հանդարտությունը, ներդաշնակությունը, հարուստ երևակայությունն ու նաև խորը իմաստը, որն իր բնույթին էր հատուկ: Տվյալ աշխատանքում նախ ուսումնասիրվել է Իրվինգի խառնվածքն ու այն միջավայրը և պատմական ժամանակաշրջանը, ուր նա ապրել է: Ապա փորձ է արվել զուգահեռներ անցկացնել նրա անհատականության և փոքր արձակյի միջև՝ հնարավորինս բացահայտելով դրանցում եղած փոխադարձ կապը: Գրողի գուսպ, հավասարակշիռ, ներհուն տեսակը հստակ արտահայտվում է իր արձակյի մեջ եղած համաչափությամբ: Նա բացառում է ծայրահեղությունները թե՛ իր կյանքում և թե՛ իր ստեղծագործություններում:

Այս աշխատանքում նաև դիտարկվում են Իրվինգի փոքր արձակյին հատուկ կառուցվածքային որոշ առանձնահատկություններ: Արձակագիրն իր պատմվածքներում նախընտրում է խոսքը շարադրել հնարավորինս հակիրճ, բայց, միևնույն ժամանակ, "էպիկական" հանդարտությամբ: Նրա պատմվածքներում շատ են նկարագրական հատվածներ, որոնք լրացվում են ամենափոքր մանրամասներով և պատկերազարդ տեսարաններով: Փոխաբենն այստեղ գրեթե միշտ զգացվում է գործողությունների ու ակտիվության պակաս:

Գրողի պատմություններում կա ջերմություն, պարզություն, բարի հումոր, որոնք կապված են հեղինակի մարդկային տեսակի հետ. նա հոգատար էր թե՛ ընտանիքի անդամների և շրջապատի հանդեպ և թե՛ իր ստեղծած գործերի հանդեպ: Մրա վառ ապացույցն են թե՛ այն ջերմագին վերաբերմունքն ու սերը իր հարազատների ու շրջապատող աշխպարհի հանդեպ, թե՛ մանրակրկիտ ու խնամքով ընտրված բառերի հարուստ համադրությունը, որ նա կիրառում է իր երկերում: Դրանք կարդալիս տպավորություն է ստեղծվում, որ ամեն բան իրական է, և ընթերցողն այդ տեսարանների ու պատկերների անմիջական ականատեսն է: Այսպիսով, քննության առնված ստեղծագործությունների դրական, թափանցիկ և պատկերավոր շարադրման ոճը թույլ է տալիս եզրակացնել, որ գրողի պարզ, ժամանակակից, երազկոտ և բարեխիղճ անհատականության անմիջական արտացոլանքն է:

Գրականություն

- Burton, R. (1904). *Literary Leaders of America*. New York, Charles Scribner's Sons.
- Cairns, W. B. (1930). *A History of American Literature*. New York, Oxford University Press.

- Curtis, G. W. (1860). *Irvingiana: A Memorial of Washington Irving*. New York, Charles B. Richardson.
- Curtis, G. W. (1894). *Literary and Social Essays*. New York and London, Harper and Brothers.
- Earle, John. (1890). *English Prose – Its Elements, History and Usage*. London, Smith, Elder, and Company.
- Hunt, T. W. (1890). *Studies in Literature and Style*, New York, A. C. Armstrong and Son.
- Irving, P. M. (1857a). *The Life and Letters of Washington Irving*, Vol. I. New York, G.P. Putman's Sons.
- Irving, P. M. (1857b) *The Life and Letters of Washington Irving*, Vol. II. New York, G.P. Putman's Sons.
- Irving, W. (1873). *Sketch Book*. Philadelphia, J. P. Lippincott and Co.
- Irving, W. (1982). *Tales*. Moscow, Progress Publisher.
- Irving, W. (2008). *Oliver Goldsmith*. Biblioteca Virtual Universal.
- Lowell, J. R. (1891) *A Fable for Critics*. Boston, Houghton Mifflin and Company.
- Mable, H. W. (1912). *Backgrounds to Literature*. New York, The Macmillan Company.
- Pattee, F. L. (1923). *The Development of the American Short Story*. New York and London, Harper Brothers.
- Stoddard, R. H. (1879). *The Life of Washington Irving*. Kessinger Publishing.
- Vincent, L. H. (1906). *American Literary Masters*. Boston and New York, Houghton Mifflin Company.
- Warner, C. D. (1881). *Washington Irving*. Boston and New York, Houghton Mifflin Company.
- Williams, S. T. (1935a). *The Life of Washington Irving*, Vol. I. New York, Oxford University Press.
- Williams, S. T. (1935b). *The Life of Washington Irving*, Vol. II. New York, Oxford University Press.

А. Амирян – Отражение авторского «эго» в короткой прозе Вашингтона Ирвинга. – В данной работе исследуется авторское «эго» основоположника американского романтизма Вашингтона Ирвинга в его литературном творчестве. В статье показано, как индивидуальные особенности и произведения писателя дополняют друг друга, сопоставляя и раскрывая прямую связь между ними. Наряду с изучением личности Ирвинга рассматриваются некоторые структурные и содержательные особенности произведений писателя, особенно малой прозы. Сдержанный, уравновешенный и пронизательный тип писателя ярко отражается, особенно в его рассказах и новеллах. Ни в его жизни, ни в его творчестве нет крайностей. Рассказам Ирвинга свойственны спокойствие, легкость, деликатность, гармония, юмор и одновременно глубокий смысл. В короткой прозе автора преобладают описательные отрывки, которые дополняются

различными подробностями и иллюстративными сценами. Однако здесь почти всегда наблюдается мало действий. Писатель, будучи погруженным в себя, избегал также написания длинных и скучных текстов, предпочитая им краткую, но в то же время содержательную, плавную и красивую речь. В результате создается впечатление, что все реально, и читатель является непосредственным свидетелем этих сцен и образов.

Ключевые слова: литературный стиль, рассказ, романтизм, литературное признание, мировосприятие, псевдоним, живописные сцены

Amiryan A. - *The reflection of the authorial “ego” in Washington Irving's short prose.* – In this paper, Washington Irving's authorial "ego", the founder of American romanticism, is studied. The article presents how the writer's personality and his works complement each other, paralleling and revealing their direct interconnection, as well as considers some structural and content features of the writer's works, particularly short prose. The reserved, balanced and insightful type of the writer is clearly reflected especially in his short stories and novellas. There are no extremes either in his life or in his literary works. Irving's stories are characterized by calmness, lightness, delicacy, harmony, humor and deep meaning at the same time. The short prose of the author is dominated by descriptive passages, which are complemented by various details and illustrative scenes. However, there is almost always a lack of action here. The writer, being self-absorbed, also avoided writing long and boring texts, instead preferring brief but at the same time meaningful, smooth and beautiful speech. An impression is created that everything is real, and the reader is a direct witness of those scenes and images.

Key words: literary style, short story, romanticism, literary recognition, worldview, pseudonym, picturesque scenes